ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
N PDU-200-01-26
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **<< 20 >>. << 04 >>. 2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իգիթյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, հիմք ընդունելով 05.03.2026 թվականին կնքված **PDU-200-01-26** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը համաձայնության են եկել և հաստատում են, որ PDU-200-01-26 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում **291,000,000** (երկու հարյուր իննսունմեկ միլիոն) ՀՀ դրամ գումարը հատկացնել որպես կանխավճար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 348-Ն որոշումը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«Հայփոստ» ՓԲԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք. Երևան 0061,Արշակունյաց 65/5**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
գործառնական վարչություն	***Հ/Հ՝ 1930003703156000***
Հ/Հ 900011042471	***ՀՎՀՀ՝ 02507464***
ՀՎՀՀ 02882913	**Հեռ: /010/544-544**
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ: business@haypost.am**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
_____ Խ. Իգիթյան	**_____ Շ. Ալեքսանյան**
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի	**/ «Հայփոստ» ՓԲԸ**
պարտականությունները կատարող/	**Գլխավոր գործադիր տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**